ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները՝ որպես փոփոխությունների ջատագովներ Հարավային Կովկասում և Մոլդովայում

Իրականացման ժամանակահատված: 15.01.2020 - 30.09.2022

ԱԼԳ երկրներ:

Հայաստան, Մոլդովա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 1 647 010

Ընդհանուր բյուջե: € 1 647 010

Իրականացնող կազմակերպություն(ներ):

People in Need

Նախագծի նկարագրություն:

«Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները՝ որպես փոփոխությունների ջատագովներ Հարավային Կովկասում և Մոլդովայում» ծրագիրն ուղղված է աջակցելու նորաստեղծ քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, տեղական խմբերին, քաղաքացիական նախաձեռնություններին, ինչպես նաև սոցիալական և մշակութային շարժումներին՝ Հարավային Կովկասի տարածաշրջանի երկրներում և Մոլդովայում ժողովրդավարացման գործընթացն առաջ մղող վստահելի դերակատարների իրենց դերում:

Ծրագրային թիմի և հմուտ ֆասիլիտատորների աջակցությամբ յուրաքանչյուր ընտրված կազմակերպություն կմշակի իր սեփական ռազմավարությունը՝ քարտեզագրելով իր ուղին, հասարակության մեջ դերը և համակարգային փոփոխությունները, որոնց վրա այն փորձում է ազդել: Մասնակիցները կգնահատեն իրենց կարողությունները և կստանան անհատական դասընթացների, քոուչինգի, խորհրդատվությունների, ուսումնական այցերի մասնակցելու հնարավորություն: Նրանք նաև կամրապնդեն իրենց կապերը սեփական համայնքների, աջակիցների և կամավորների հետ ու կապ կհաստատեն տարբեր երկրների կոլեգաների և գործընկերների հետ:

Ընտրված կազմակերպությունները կստանան հետազոտությունների, թեմատիկ գիտելիքներ ձեռք բերելու և տեղական, ազգային ու միջազգային մակարդակներում քաղաքականության շուրջ երկխոսություններում

Ակնկալվող արդյունքներ:

- Թիրախային ՔՀԿ-ների կազմակերպական կարողությունների բարելավում.
- ՔՀԿ-ների քաղաքացիական մասնակցության և քաղաքականության երկխոսության ամրապնդում.
- ՔՀԿ-ների միջև, ինչպես նաև մասնավոր հատված հետ կապերի և համագործակցության ամրապնդում: